

կային մէկէ երկուսէ՝ հասաք ի յէՏՆՃՈՒԿ
 քաղաքն . եւ այն եալու էր՝ ի բարձր լեռան
 վրայ . եւ շուրջ ու բոլորն սաֆի ձիթենիք,
 այգիք եւ նոնենիք անթիւք: Եւ կայր անդ
 75 երեք էրէց, հարիւր յիսուն տուն հայի . եւ
 տուն մի ժամ ասէին: Եւ այս քաղքին չէշ-
 մաքն եւ դոներն ուստի ջուրք բխէին, ամէն
 խաչ կար հանած . ուստի յայտ է որ քրիստո-
 նէից շէնք էին:

80 Եւ անտի յառաջ կէս միլ մի կայր ատա
 մի ի մէջ ծովու, մեծ քան Ստամպուլ, որ
 այժմ ամայի էր . միայն նշմարանքն երեւէին,
 եւ պրճերն եւ դուլանին: Եւ գնացեալ ի նա
 տեսաք զարմանալի շինուածք եւ մեծամեծ
 85 եարուք հին ժամանակաց, եւ գետնափոր
 մաղարայք, ներքեւն տաշած եւ կտիած, մեծ
 վէմք եւ սայլք պատերն վերեւն ու ներքեւն:
 Եւ մտեալ ի նոսա՝ տեսաք յոյժ լայնանխառ
 եւ ընդարձակ, որ թէ երեք օրն շրջէաք չհա-
 90 սանէաք ի վերջն . եւ ասին թէ այս էր յա-
 ռաջն քաղաքն որ կոչի ԲՈՒՉԱՆԴԻԱ, զոր
 Բուզանդ թագաւորն է շինել իւր անուան
 վրայ . զոր թողեալ զայն յայլ տեղոջ շինեցին
 եւ անուանեցին Կոստանդնուպոլիս . եւ այժմ
 95 ամայի մնացեալ . անտի կրեն զաւորղայիւք
 փայզանք զանթիւ մէրմէրան եւ սալս մեծա-